ԲԵԹՂԵՀԵՄԸ ԵՒ ՄԵՆՔ

«Բայց յայտնեցաւ այժմիկ յերեւել Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ խափանեաց զմահ եւ լուսաւոր արար զկեանս եւ զանեղծութիւն ի ձեռն աւետարանին»
(Բ. Տիմ. Ա. 10)

Հիսուս Քրիստոսի Ծննդից մինչեւ Հարություն, ըստ հայ եկեղեցական օրացույցի, այդքան էլ մեծ ժամանակաշրջան չէ. ընդամենը երեքից-չորս ամիս: Բայց այդ կարճ ընթացքում հավատացյալ հայորդին շատ բան կարող է հասկանալ ու ըմբռնել, ամենատարբեր գոյաբանական եւ համամարդկային հարցերի համար պատասխաններ ու լուծումներ գտնել:

Մեկ անգամ եւս Բեթղեհեմյան աստղը փայլատակեց Հայ Եկեղեցու անդաստանում՝ ազդարարելով Մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի ծննդյան ու հայտնության ավետիսն աշխարհում: Հազարավոր հայկական եկեղեցիներ հունվարի 5-ի երեկոյան ճրագալույցի պատարագից սկսած մարդկանց բաշխում էին Տիրոջ պարգեւած լույսը. «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց» (Ղուկ. Բ. 32): Ամանորյա նորամուտի ու նորոգման հույզերին խառնվում էր մանուկ Հիսուսի անմեղ ժպիտը, որով ազդարարվում էր հոգեւոր նորոգության ու նորամուտի կարիքը մարդկանց կյանքում եւ աշխարհում: Եւ մարդիկ, անշուշտ, հուզվում էին. նրանց մի մասը՝ անկեղծ, մյուս մասը՝ պահի ազդեցությամբ, մի մասն էլ՝ պարզապես, որովհետեւ հաճելի էր տոնական մթնոլորտին խառնվելը, մյուս մասն էլ խորհելու եւ շատ ու շատ բաներ կյանքում վերսկսելու մտահոգությամբ նայում էր եկեղեցու սրբազան խորանից առած լույսին՝ իբրեւ հաջողության ու նոր տարին

բարիով սկսելու հույսի խորհրդանիշ: Բայց որ ամենակարեւորն է՝ նրանք ամենքն էլ *եկեղեցանում* էին. հույզերի, մտածումների մեջ, թեեւ տարբեր ու բազմազան, այցի եկած մոգերի պես իրենց ընծաներն էին մատուցում Տիրոջը՝ իբրեւ նրա մարմնի՝ Եկեղեցու անբաժան մասնիկներ ու անդամներ: Եւ Քրիստոսի ծնունդը եւս մեկ անգամ առիթ էր տալիս մեզ խորհելու անտեսանելի ու տեսանելի աշխարհների միախառնման այն սքանչելի իրականության մասին, որին տալիս ենք «Սուրբ Ծնունդ եւ Աստվածահայտնություն» անվանումը, իսկ Եկեղեցում օրհներգում շարականագրի խոսքերով՝ «Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ»:

Անշուշտ, Քրիստոսի ծնունդը խորհուրդ է մեզ համար, քանզի չգիտենք դրա «ինչպե՞ս»-ը, բայց եւ հայտնություն է, որովհետեւ Տերն իր օրինակով մեզ բացահայտում է դրա «ինչո՞ւ»-ն. «Ես եկի զի զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին» (Յովհ. Ժ. **10**): Այո՛, կյանք, որ մարդկային է, հասարակական, քաղաքական, տնտեսական, ի վերջո, արդի, որ վերաբերում է ուղղակիորեն մեր դարին ու մեզ՝ այդ ժամանակաշրջանի ժառանգորդներին ու ավանդապահներին միաժամանակ: Տիրոջ ծնունդը, հետեւաբար, պարփակում է այդ կյանքը, որ, իբրեւ Բեթղեհեմյան մի նոր քարայրում, հավատի ջահով մոտենում ու բացահայտում է յուրաքանչյուր քրիստոնյա՝ Եկեղեցու սրբազան կամարների ներքո: Ահա թե ինչու Քրիստոսի ծննդյամբ մարդիկ *եկեղեցանում* են՝ նույնանում իրենց նպատակներով, կյանքում ունեցած առաքելությամբ, ի վերջո՝ իրենց փնտրտուքով. նրանց բոլորի իղձն է մեկ անգամ եւս տեսնել ու լսել Աստվածային Մանուկին: Արդ, եկեղեցացած այդ մարդկանց է դիմում հրեշտակը. «Ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ որ է Օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի» (Ղուկ. Բ. **10**): Տիրոջ Ծնունդը՝ Մարդեղությունը, նոր, բոլորովին տարբեր մի կյանք է բերում մարդկանց, տարբեր՝ ոչ թե իր ձեւով եւ բովանդակությամբ, այլ աշխարհն ու մարդուն ընկալելու իր յուրահատկությամբ: Եւ այս կյանքի առանցքում է Եկեղեցին՝ Քրիստոսի մարմինն ու ներկայությունն աշխարհում, դնում *եկեղեցացած մարդուն*:

ԻԱ. դարի շեմին առավել քան պարզ է, որ մարդկային հասարակությունն ապրում է այլեւս նոր ու բարեկեցիկ ապագայի գերիշխող տեսլականով: Ամեն տասնհինգերորդ րոպեն մարդու համար դառնում է պատմություն, որին մարդ կամ կանդրադառնա, կամ հավետ կմոռանա դեպի Տիեզերքի նվաճումն ուղղված իր խելահեղ վազքի մեջ: Մարդ կերտում է ժամանակի ու տարածության նոր, անցյալի ըմբռնումներից բոլորովին տարբեր հասկացություններ, բարոյական մոտեցումներ ու նորմեր, որոնք շատ հաճախ ծնունդ են դարիս տեխնոկրատիկ դեգերումների ու փնտրտուքների:

Այս ամենի մեջ շարունակում է իր Տիրոջ օրինակով ուսուցանել եւ քարոզել Եկեղեցին: Շատերին կարող է թվալ, թե այն կորցրել է իր վաղեմի նշանակությունը ոչ միայն Հայոց մեջ, այլեւ աշխարհում ընդհանրապես: Վերջին տասնամյակներում հատկապես սրվել է այսպես կոչված լիբերալ, ազատամիտ քննադատությունը Եկեղեցու նկատմամբ, որը հաճախ որակվում է իբրեւ դոգմատիզմի եւ անհանդուրժողականության աղբյուր: Քննադատությունները հաճախ տեղին են ու կառուցողական, իսկ մեծավ մասամբ՝ միտումնավոր ու կանխակալ: Բայց դրանք լավագույն առիթն են տալիս մեզ, հատկապես Քրիստոսի հրաշափառ Ծննդյան տոնի լույսի տակ, վերհիշելու մարդուն տրվող եւ տրվելիք այն կյանքը, որի համար Քրիստոս թափեց իր արյունը, իր մեծությունից աղքատացավ՝ մեզ հարստացնելու համար: Մարդուն եւ կյանքն արժեւորելն է, որ այսօր պետք է դառնա Եկեղեցու եւ եկեղեցականի առաքելության առանցքը: Մարդկանց եւ հավատացելոց աչքերը պետք է նորոգվեն քրիստոնեական լույսով՝ նորովի դիտելու եւ ըմբռնելու եկեղեցացած մարդուն վերապահված կյանքը: Ի վերջո, նյութի ու գիտության ոգով հագեցած այս դարում Եկեղեցին պետք է ստեղծի տարածքի, ժամանակի եւ աշխարհի այն նոր գաղափարը, որտեղ, ինչպես փառավոր անցյալի մեր էջերում, ընդմիշտ դրոշմված կմնա տեսանելի ու անտեսանելի աշխարհների միախառնումը: Եկեղեցական առաքելությունը յուրահատուկ է այնքանով, որքանով հնարավորություն է տալիս մարդուն թափանցելու հոգեւոր, անտեսանելի աշխարհի խորքերը, վառ պահելու մեր պոստմոդեռն դարաշրջանին այնքան պակասող կենդանի, հոգեւոր կապը մարդ-մարդ եւ Աստված-մարդ փոխհարաբերությանց:

Քրիստոսի ավետարանի քարոզչությունը, ուրեմն, նորոգվում է մարդկային հասարակության ու գերբնականի մասին մարդու ունեցած ըմբռնումներին համաչափ՝ առանց կորցնելու, սակայն, իր ներքին, կենարար ու կենսաբաշխ հատկությունը. «...զի զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին»: Նոր այս կյանքը փրկելու համար է, որ հավիտենական Բանը՝ Աստծո Խոսքը, անհուն սիրո իր դրդումով, խոնարհվում է մինչեւ անգոյության անհատակ անդունդի եզերքը: Մերօրյա մարդուն, առավել քան երբեւէ, պետք է հիշեցնել, որ Քրիստոսի Ծնունդը չի սահմանափակվում Եկեղեցու կամարներով ու պատերով. այն տարածվում, լուսավորում ու վերանորոգում է կյանքը, մարդուն, աշխարհն ու ողջ արարված Տիեզերքը: Եւ միայն Սուրբ Ծննդյան քնքուշ ու խնամարկու ձեռքերով է մարդ ի վիճակի դառնալու պահել ու փայփայել աստվածային պարգեւը՝ կյանքը՝ իբրեւ մարդու անցյալի, ներկայի ու ապագայի մի հանրագումար...

Ն. Ա.